մանց, դարձեալ ասա և անդ՝ Մնացորդք հայրենի յիշատակաց քիչէն շատը մեզ գուշակել կու տան, և գեղեցիկ վայելչութեամբն զոր դեռ անկորուստ պահած են՝ կը քաշեն հետազօտ հայ աչքերը։

Անշուշտ այդ Մնացորդաց մէջ առաջին տեղին բռնողը ազգային եկեղեցիք են. զի ուր և լինի հայ ժողովուրդ, որպիսի՛ հանգամանաց մէջ ալ գտնուի, մինչև անգամ՝ ինքն երկրափոր նկուղներու մէջ ևս բնակի, կ'աշխատի որ Աստուծոյ տունը, կրօնքի ժողովարանը, եկեղեցին՝ գեղեցիկ և վայելուչ լինի։ Ի հնութենէ Մնացած դեռ ևս կանգուն կան Կաֆայի մէջ երեք ազգային եկեղեցիք. Ս. Սարգիս, հին աթոռական եկեղեցի, ինչպէս կ'անուանեն և կը գրեն ազգային յիշատակարանք. — Ս. Հրեշտակապետք, որ մայր եկեղեցեաց կը համարուէր ինչուան վերջին տարիներուս մէջ. — և Ս. Կարապետ, որ այժմ Ռուսաց ձեռքն է։ Այս երեք եկեղեցեաց վրայ ևս ցարդ յայտնի կ'երևի ազգային հարտարապետութեան հաչակ և վայելչութիւն, և որք չեն կորուսած իրենց նախնական տիպարը. մինչ Ս. Գէորգ ի գերեզմանատան, և Ս. Անանա ի սարին, վերջերս նորոգուելով, բոլորովին կորուսել են իրենց առաջին վայելչութիւնը։